ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

2023-2025

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ԵՎ 2023

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

2019-2020թթ-ի ընթացքում սահմանադրական դատարանը ընդգրկված է եղել մի շարք բարձր մակարդակի խորհրդաժողովներում, որի շրջանակներում քննարկվել են իրավունքի գերակայությունը, մարդու իրավունքների ոլորտում նոր մարտահրավերների դիմագրավումը: Կազմակերպվել են մի շարք միջոցառումներ և թեմատիկ սեմինար-քննարկումներ՝ նվիրված ներպետական դատական ատյանների և ՄԻԵԴ-ի փոխհարաբերություններին, արդյունավետ դատական պաշտպանության միջոցներին, խոսքի ու արտահայտվելու ազատությանը: Այս ժամանակահատվածում անդրադարձ են կատարվել դատաիրավական և հակակոռուպցիոն ոլորտի բարեփոխումների բովանդակությանն ու ընթացքին: Կարևորվել է միջազգային գործընկերների աջակցությունն ու խորհրդատվությունը այդ բարեփոխումների իրականացման գործում:

Նախորդ միջնաժամկետ ժամանակահատվածում Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներով, Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Սահմանադրական դատարանի մասին>> սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետով և 19-րդ մասով սահմանված դեպքերում, իրավական անվտանգության ապահովման նպատակով սահմանվել են Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու ողջամիտ վերջնաժամկետներ՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին, Կառավարությանը վիճարկվող դրույթների իրավակարգավորուները համապատասխանեցնելու Սահմանադրական դատարանի կոնկրետ որոշումների պահանջներին: Ոչ եզակի դեպքերում, մինչև անհրաժեշտ օրենսդրական կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելը, Սահմանադրական դատարանը Սահմանադրության դրույթների վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը գնահատելիս արտահայտել է իրավական դիրքորոշումներ, որոնք կոչված են իրավակիրառ պրակտիկան նպատակաուղղելու նորմատիվ իրավական ակտն իրենց սահմանադրահիրավական բովանդակությանը համապատասխան ընկալելու և դրանց համապատասխան կիրառումն ապահովելու ուղղությամբ՝ հատկապես այն դեպքերում, երբ խոսքը վերաբերել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների անմիջական գործողության ապահովմանը:

2019թ-ը առավել ուշագրավ է եղել ՀՀ սահմնադրական դատարանի և «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրով /3տարի/, որի նպատակն էր ապահովել համագործակցության շրջանակ, իրականացնել փորձի փոխանակում սահմանադրական իրավունքի հարցերի շուրջ և խթանել իրավական երկխոսություն: Այս հուշագիրը ամուր հիմք կհանդիսանա հայ-գերմանական կապերի հետագա ամրապնդմանը :

2020թ-ի ընթացքում քննություն առնելով վիճարկվող նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության հարցերը, հիմնականում հաշվի են առնվել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների ապահովման, պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը և որոշակիությունը, ինչպես նաև գնահատվել է ոչ միայն հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորվածությունը, այլ նաև շեշտ է դրվել արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ օրենսդրական կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի սահմանման անհրաժեշտությանը:

2021թ-ը նշանավորվել է սահմանադրական արդարադատության իրականացման չափանիշների և սահմանների վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված նախադեպային իրավական դիրքորոշումների զարգացմամբ: Ելնելով մարդու իրավունքների պաշտպանության և իրավունքի գերակայության սկզբունքներից՝ ՍԴ –ն իր մի շարք որոշումներով հստակերել է ՍԴ ներկայացվող դիմումներին ներկայացվող պահանջները,

ինչն ունի հիմնարար նշանակություն՝ արդյունավետ սահմանադրական արդարադատություն իրականացնելու համար:

Նախորդ՝ 2020թ-ի համեմատ 2021թ-ին փոփոխվել են ՍԴ դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների ակտիվության ցուցանիշները: Մասնավորապես, եթե նախորդ տարիներին դիմումների մոտավորապես ¼-ը ներկայացնում էր Կառավարությունը և վերաբերում էր միջազգային պայմանագրերով ՀՀ ստանձնած պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության ստուգման հարցին, ապա 2021թ-ին այդպիսի դիմումների քանակը նվազել է, բայց վերացական վերահսկողության շրջանակներում մոտ 10 անգամ ավելացել է Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդից, հինգ անգամ՝ Մարդու իրավունքների պաշտպանից և վեց անգամ՝ Հանրապետության նախագահից ստացվող դիմումների քանակը, իսկ կոնկրետ վերահսկողության շրջանակներում՝ գրեթե կրկնակի դատարաններից ստացված դիմումները:

Անհրաժեշտ է փաստել նաև, որ քննության առնված գործերով կայացված թվով 50 որոշումներից 18 տոկոսի դեպքում Սահմանադրական դատարանը քննության առնված նորմը /նորմերը ճանաչել է Սահմանադրությանը հակասող, մոտ 10 տոկոսի դեպքում՝ Սաահմանադրությանը համապատասխանող՝ ՍԴ-ի կողմից տրված մեկնաբանությունների շրջանակներում, արդյունքում՝ սահմանելով /անհատական դիմումների դեպքում/, որ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման:

Սահմանադրական դատարանի ընդունած որոշումների կատարման վիճակը հետևյալն է՝

2019թ- Սահմանադրական դատարան մուտքագրվել է 248 դիմում: ՍԴ-ի նիստերում քննվել և ըստ էության վերջնական որոշում է կայացվել 61 գործով, որից 34-ը՝ Կառավարության դիմումների հիման վրա, 15-ը՝ դատարանների դիմումների հիման վրա, 14-ը՝ անհատական դիմումների հիման վրա, 1-ը՝ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա, և 1-ը՝ Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա:

2020թ-ՍԴ մուտքագրվել է 253 դիմում: ՍԴ մուտքագրված դիմումների փաստացի պատկերը հետևյալն է. պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդ- 1 դիմում, Հանրապետության նախագահ- 1 դիմում, Կառավարություն- 46 դիմում, Բարձրագույն դատական խորհուրդ /որպես դատարան/- 1 դիմում, ֆիզիկական և իրավաբանական անձինք- 185 դիմում, Մարդու իրավունքների պաշտպան- 2 դիմում, դատարաններ- 16 դիմում, Ազգային ժողովի խորհուրդ- 1 դիմում:

2021թ-Սահմանադրական դատարան է մուտքագրվել 198 դիմում: ՍԴ մուտքագրված դիմումների փաստացի պատկերը հետևյալն է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդ- 10 դիմում, Հանրապետության նախագահ- 6 դիմում, Կառավարություն- 29 դիմում, ֆիզիկական և իրավաբանական անձինք-108 դիմում, Մարդու իրավունքների պաշտպան- 11 դիմում, դատարաններ- 26 դիմում, գլխավոր դատախազ- 1 դիմում,Ազգային ժողովի ընտրություններին մասնակցած կուսակցություններ կամ կուսակցությունների դաշինքներ - 4 դիմում, տեղական ինքնակառավարման մարմիններ-3 դիմում: 2021 թվականին Սահմանադրական դատարանը կայացրել է ընդհանուր առմամբ 404 որոշում, որոնցից 50 ըստ էության որոշում, 262 աշխատակարգային որոշում, 92 դատական կազմի որոշում:

2021թ-ին ՍԴ միջազգային պայմանագրերով ստանձնված պարտավորությունների սահմանադրական հարցը որոշելու վերաբերյալ գործերով դիմումների հիման վրա ընձեռնվել է 18 որոշում, որոնցի 2-ով դիմումները ՍԴ-են մուտքագրվել 2020 թվականին:

2021 թվականին մուտքագրված 29 դիմումներից Սահմանադրական դատարանի կողմից քննության են ընդունվել 25-ը, 3 դիմումներով գործերի քննության ընդունելու հարցը որոշվելու է 2022 թվականին և 6 գործերով դատաքննությունը կսկսվի 2022 թվականին, իսկ 1 գործով կայացվել է վարույթը կասեցնելու մասին աշխատակարգային որոշում /14 12 21թ ՍԴԱՈ-253/, քանի որ անհրաժեշտություն է առաջացել կատարել լրացուցիչ ուսումնասիրություններ և ստանալ տեղեկություններ: Քննության ընդունված 25 դիմումներով 2021 թվականին կայացվել է 16 որոշում:

Սահմանադրական դատարան ներկայացված ՍԴ-ի կողմից քննության առնված բոլոր 18 միջազգային պայմանագրերը 2021 թվականի ընթացքում վավերացվել են Ազգային ժողովի կողմից:

ՍԴ-Ն իր գործունեության իրականացման հետ կապված գենդերային խնդիրներ չունի, մասնավորապես վերջին երեք տարիների ընթացքում միջին հաշվարկով կին աշխատողների թվաքանակը կազմել է 0,54 տոկոս, տղամարդ աշխատողներինը՝ 0,46 :

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Օրենսդրության մեջ առկա բացերը հայրենական իրավունքի թերևս ամենաարդիական հիմնախնդիրներից են: Անհրաժեշտ է փաստել, որ տարբեր տարիներին Սահմանադրական դատարանի տարեկան հաղորդումներում բարձրացված հիմնախնդիրների մեծ մասը շարունակում է պահպանել իր արդիականությունը: Օրենքների որակին և իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունների առնչությամբ Սահմանադրական դատարանի բարձրաձայնած մտահոգությունները հաճախ մնում են անարձագանք: Իրավակիրառ գործունեության մեջ հաճախ է իրեն զգացնել տալիս կոնկրետ հարաբերության իրավական կարգավորման բացակայության կամ թերի կարգավորման արդյունքում ծագող գրեթե փակուղային իրավիճակը: Այն պայմանավորված է հասարակական հարաբերությունների զարգացմամբ, գործող օրենսդրության հիմնական սկզբունքներով, էությամբ և բովանդակությամբ: Պատճառ կարող է հանդիսանալ նաև հետևյալ մատնանշումը՝ իրավական նորմը սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի կողմից ճանաչվել է հակասահմանադրական, սակայն իրավասու իրավաստեղծ մարմինը չի գործում բավարար օպերատիվությամբ, այն է՝ ողջամիտ ժամկետներում միջոցներ չի ձեռնարկում հակասահմանադրական ճանաչված իրավական նորմով կարգավորված իրավահարաբերությունները կանոնակարգող նոր նորմ ընդունելու համար, կամ երբ օրեսդրությունը կյանքից հետ է մնում նոր հասարակական հարաբերությունների ծագման արդյունքում, կամ երբ ընթացիկ օրենսդրությունը հետ է մնում սահմանադրական կարգավորումից և այլն: Օրենսդրական բացի հաղթահարման միջոցներից է նաև ժամանակավոր իրավակարգավորումներ նախատեսելը՝ մինչև օրենսդրի կողմից համապատասխան նորմերի ստեղծումը: Օրենսդրական բացերի հաղթահարումը ոչ միայն ՍԴ-ի որոշումների սահմանադրահիրավական մշակվածության աստիճանն է, այլ նաև վերջիններիս պատշաճ կատարումը հասցեատերերի կողմից: Հանրային իշխանության տարբեր մարմինների և պաշտոնատար անձանց կողմից նկատվում է դրանց նկատմամբ ոչ համարժեք վերաբերմունք, ինչի արդյունքում ՍԴ-ի կողմից մատնանշված հիմնախնդիրներն անհրաժեշտ իրավական լուծումներ ստանալու փոխարեն կասկածի տակ են դրվում անգամ Սահմանադրական դատարանի որոշումները կամ որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները: Վերջին հանգամանքը կարող է էականորեն վնասել ՀՀ իրավական

անվտանգությունը և չի բխում հանրային իշխանության մարմինների միջև փոխադարձ հարգանքի և համագործակցության սկզբունքի էությունից, որպիսի պայմաններում արհեստականորեն խաթարվում է դատական իշխանության հանրային վստահությունը:

ՀՀ սահմանադրական դատարանը իր գործունեությամբ առընչվում է ՄԱԿ-ի կայուն զարգացման 5-րդ և 16-րդ նպատակների հետ:

5-րդ նպատակը /գենդերային հավասարություն/ ամրագրում է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների երաշխավորվածությունը ՀՀ սահմանադրությամբ:

6-րդ նպատակի /խաղաղություն, արդարություն և ամուր հաստատություններ/ հետ կապված «2007 թվականի հոկտեմբերի 25-ին Լանզարոտում ստորագրված «Սեռական շահագործումից և սեռական բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանն իր՝ 31.03.2020թ. ՍԴՈ-1519 որոշմամբ արձանագրել է հետևյալը.

1) Կոնվենցիայով ամրագրված պարտավորություններում «օրենսդրական կամ այլ միջոցներ» եզրույթը Հայաստանի Հանրապետության համար կիրառելի է Հայաստանի Հանրապետության սահմանադրաիրավական կարգավորումների շրջանակներում, այլ կերպ՝ եթե տվյալ հարցը ենթակա է լուծման միայն օրենսդրական կարգավորումներով, այն չի կարող լուծվել այլ միջոցներով,

2) Կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված՝ երեխաների իրավունքները խթանելու և պաշտպանելու համար անկախ իրավասու ազգային կամ տեղական կառույցներ ստեղծելու կամ նշանակելու պարտավորությունը չի ենթադրում պարտադիր նոր մարմնի ստեղծում, և այդ պարտավորության իրականացումը կարող է ապահովվել Հայաստանի Հանրապետությունում արդեն իսկ գործող իրավասու մարմնի գործունեության շրջանակներում:

3) Սահմանադրական դատարանը գտնում է, որ Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող պարտավորությունները պետք է իրականացվեն վերաբերելի սահմանադրական արժեքների պահպանության պայմաններում, մասնավորապես՝ հաշվի առնելով Սահմանադրության 16-րդ հոդվածի (մանկության հատուկ պաշտպանության մասով), 36-րդ հոդվածի 1-ին մասի, 37-րդ հոդվածի, 86-րդ հոդվածի 6-րդ կետի սահմանադրական բովանդակությունը:

4) Միաժամանակ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ Կոնվենցիայով նախատեսված՝ երեխաների տարրական և միջնակարգ կրթության ընթացքում սեռական շահագործման ու սեռական բնույթի բռնությունների հետ կապված վտանգների, ինքնապաշտպանության միջոցների մասին տեղեկությունները տրամադրվեն՝ պարտադիր հաշվի առնելով երեխաների հասունության մակարդակը և նրանց զարգացող կարողությունները, ինչպես նաև ապահովելով նրանց լավագույն շահի առաջնահերթ պաշտպանության նկատմամբ պետության արդյունավետ վերահսկողությունը՝ ի կատարումն պետության՝ մանկության հատուկ պաշտպանության սահմանադրական պարտականության:

5) Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող պարտավորությունների կատարման անհրաժեշտ օրենսդրական երաշխիքների ապահովումը և իրավակիրառական պրակտիկան պետք է ներդաշնակ լինեն սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին:

6) Սահմանադրական դատարանը փաստում է, որ Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող պարտավորությունները հատկապես վերաբերելի են Ազգային

ժողովի ու Կառավարության լիազորություններին, և Կոնվենցիայի վավերացման նպատակա-հարմարության հարցը գտնվում է հիշյալ մարմինների լիազորությունների տիրույթում»: Այսպիսով ՀՀ սահմանադրական դատարանի քաղաքականության հիմնական նպատակն է ապահովել սահմանադրության գերակայությունը:

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով և գործող այլ ռազմավարական փաստաթղթերով սահմանված ՀՀ կառավարության քաղաքականության նպատակների և թիրախների հետ	Կապը ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների և ցուցանիշների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը			
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը		
… *ՀՀ –ում սահմանադրական արդարադատության իրականացումը և սահմանադրության գերակայության ապահովում*	… *1092 ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում*	… *Սահմանադրական խնդիրբովանդակող դիմումների քանակ, հատ*	*250*	*2021*	*260*	*2024*		
ՀՀ –ում սահմանադրական արդարադատության իրականացումը և սահմանադրության գերակայության ապահովում	*1092 ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում*	*Արդարության հասանելիության լիովին ապահովում, տոկոս*	*100*	*2021*	*100*	*2025*		*16-րդ նպատակ՝ <<Խաղաղություն, արդարություն և ամուր հաստատություններ>> 16.3 թիրախ՝ «Խթանել օրենքի գերակայությունը ազգային և միջազգային մակարդակներում և ապահովել արդարադատության հավասար հասանելիություն բոլորի համար»*
ՀՀ –ում սահմանադրական արդարա	*1092 ՀՀ սահմանադրական դատարանի*	*Աշխատողների ընդհանուր*	*50տոկոս*	*2021*	*50 տոկոս*	*2025*	*ՀՀ կառավարության 19.09.2019թ 1334-Լ որոշման ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման*	*5-րդ նպատակ՝ <<Գենդերային հավասարություն>> 5.1 թիրախ՝*

դատության իրական ացումը և սահմանադրության գերակայության ապահովում	*գործունեության ապահովում*	*թվաքանակում կանանց տեսակարար կշիռը, տոկոս*					*ռազմավարության հավելված 1-ի 3-րդկետ՝ «Կանայք և տղամարդիկ իրավահավասար են»*	*«Ամենուր վերջ դնել բոլոր կանանց և աղջիկների նկատմամբ գործադրվող խտրականության բոլոր ձևերին»*

3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Ծախսերը իրականացվում են ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովման նպատակով:

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման)	Հիմնավորումներ
Ապարատի պահպանման ծախսեր	ՀՀ սահմանադրական դատարանի մասին օրենք
…	

4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

4.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

ՀՀ սահմանադրական դատարանի պարտադիր ծախսերն ուղղված են դատարանի գործունեության ապահովմանը: Այն ընդգրկում է

1. ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության և սահմանադրական արդարադատության ապահովում միջոցառումը:

2. ՀՀ սահմանադրական դատարանի պահուստային ֆոնդ միջոցառումը:

3. Սահմանադրական դատարանի տեխնիկական հագեցվածության ապահովում:

Դասիչը		Միջոցառման անվանումը	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը[1]	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները[2]	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը[3]
Ծրագիր	Միջոցառում				

[1] *Ներկայացվում է համապատասխան միջոցառման շրջանակներում իրականացվող պարտադիր (պարտադիր ծախսերին դասվող միջոցառումների դեպքում) կամ հայեցողական (հայեցողական ծախսերին դասվող միջոցառումների դեպքում) պարտավորությունների համառոտ նկարագիրը՝ այդ թվում մատուցվող ծառայությունների, տրամադրող տարնսֆերտների և շահառուների շրջանակը:*

[2] *Սյունակը լրացվում է միայն պարտադիր ծախսերին դասվող միջոցառումների համար:*

[3] *Սյունակում կատարվում են հղումներ պարտադիր ծախսային պարտավորությունները սահմանող օրենքների և միջազգային պայմանագրերի կոնկրետ դրույթների վրա, իսկ այդ պարտավորությունների շրջանակներում գործադիր մարմին վերապահված հայեցողական իրավասությունների դեպքում՝ նաև այդ իրավասությունները սահմանող իրավական ակտերի վրա: Հայեցողական*

Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1092	11001	ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության և սահմանադրական արդարադատության ապահովում	Պարտադիր	Ներկայացուցչական ծախս և գործուղումների ծախս	ՀՀ սահմանադրության 167 հոդված
1092	11002	ՀՀ սահմանադրական դատարանի պահուստային ֆոնդ	պարտադիր	Որոշվող ծախսային ուղղությունները	ՀՀ սահմանադրական դատարանի մասին օրենքի 3-րդ հդ, 5-րդ կետ
1092	31001	ՍԴ տեխնիկական հագեցվածության ապահովում	պարտադիր		

4.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

ՀՀ սահմանադրական դատարանի կողմից 2023-2025թթ-ի ընթացքում իրականացվելու է «1092. ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում» ծրագիրը, որի ծախսային պարտավորությունները 2023թ-ի համար կազմում են 871602.7 հազ. դրամ, 2024 թվականին՝ 859259.8 հազ. դրամ և 2025թվականին՝ 870282.5 հազ. դրամ:

Ծրագրի շրջանակներում իրականացվելու են հետևյալ միջոցառումները՝

«11001. ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության և արդարադատության ապահովում», որի համար պետական բյուջեից նախատեսվում է ֆինանսավորում՝ 2023թ-ին 839007.8 հազ. դրամ, 2024թ-ին՝ 842411.6 հազ. դրամ, 2025թ-ին՝ 853218.1 հազ. դրամ:

«11002. ՀՀ սահմանադրական դատարանի պահուստային ֆոնդ», որի համար պետական բյուջեից նախատեսվում է 2023թ-ին՝ 16780.2 հազ. դրամ, 2024թ-ին՝ 16848.2 հազ. դրամ և 2025թ-ին՝ 17064.4 հազ. դրամ

«31001. ՀՀ սահմանադրական դատարանի տեխնիկական հագեցվածության ապահովում», որի համար պետական բյուջեից նախատեսվում է 2023թ-ին՝ 15814.7 հազ. դրամ:

ՀՀ սահմանադրական դատարանը գոյություն ունեցող պարտավորությունների գծով ծախսային խնայողություններ չունի:

4.3. Նոր նախաձեռնությունները

ՀՀ սահմանադրական դատարանը նոր նախաձեռնությունների չունի:

ծախսերին դասվող միջոցառումների դեպքումկապարվում են հղումներայդ ծախսային պարտավորությունները սահմանող իրավական ակտերի վրա:

5. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

ՀՀ սահմանադրական դատարանը ոչ բյուջետային աղբյուրներից սպասվող եկամուտներ չունի:

6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՀՀ սահմանադրական դատարանի գործունեությունը համահունչ է ՀՀ կառավարության որդեգրած զարգացման քաղաքականությանը:

7. ՄԻՋՈՒԼՈՐՏԱՅԻՆ (ԽԱՉՎՈՂ) ԲՆՈՒՅԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում ծրագրի / 1092/ ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության և սահմանադրական արդարադատության ապահովում միջոցառումը /11001/ իր գործունեությամբ աջակցում է հասարակության արժանապատիվ կյանքի պայմանների բարելավմանը, միջազգային իրավունքի հիման վրա պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված արտաքին քաղաքականության իրականացմանը:

8. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐՈՎ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՀՀ սահմանադրական դատարանը վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրեր կամ միջոցառումների չունի:

9. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2023-2025թթ ժամանակահատվածի համար ՍԴ-ի ֆինանսական պահանջները համապատասխանում են գոյություն ունեցող պարտավորություններին և նոր նախաձեռնություններ չեն նախատեսվում: 2023թ-ին ՍԴ-ն պետ. բյուջեից նախատեսում է 871602.7 հազ. դրամ, 2024թ-ին՝ 859259.8 հազ. դրամ, իսկ 2025թ-ին՝ 870282.5 հազ. դրամ ֆինանսավորում:

10. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Հայտով ներկայացված ցուցանիշները հիմնականում իրատեսական են և հիմնվում են նախորդ տարիների փորձի վրա:

Ռիսկի նկարագրությունը	Երևույթի հանդես գալու հավանականությունը[4]	Հնարավոր ազդեցությունը նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա	Ռիսկի կանխման/ հաղթահարման հնարավոր ուղիները
ՍԴ բնականոն աշխատանքի խաթարում	5	բացասական	Կայացված որոշումների կատարումը
….			

[4] *Ներկայացնել 1-5 թվանշանով, որտեղ 1 թվանշանը ենթադրում է առավել բարձր հավանականություն*

Հավելված N 5. Բյուջետային ծրագրերի գծով ծախսերի բաշխումն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման տարրերի

Ծրագրային դասիչը		Ծրագիր /Միջոցառում	Գործառական դասակարգման[5]			2021թ փաստ. (հազ. դրամ)	2022թ սպասվող (հազ. դրամ)	2023թ բյուջե (հազ. դրամ)	2024թ բյուջե (հազ. դրամ)	2025 թ բյուջե (հազ. դրամ)
			Բաժին	Խումբ	Դաս					
1092		*ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում*	X	X	X	679010.9	704624.6	871602.7	859259.8	870282.5
	11001	*ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության և սահմանադրական արդարադատության ապահովում*	03	03	01	665793.8	690808.4	839007.8	842411.6	853218.1
	……	…….								
	11002	*ՀՀ սահմանադրական դատարանի պահուստային ֆոնդ*	*03*	*03*	*01*	13217.1	13816.2	16780.2	16848.2	17064.4
	31001	*ՀՀ սահմանադրական դատարանի տեխնիկական հագեցվածության ապահովում*	*03*	*03*	*01*			15814.7		
……..										

[5] *Լրացվում են բյուջետային ծրագրերի միջոցառումների բովանդակությանը համապատասխանող բյուջետային ծախսերի գործառական դասակագման բաժնի, խմբի և դասի կոդերը: Բյուջետային ծրագրերի մակարդակում այս սյունակները չեն լրացվում:*

Հավելված N 6.1 Բյուջետային ծրագրերի/միջոցառումների ֆինանսավորման առաջնահերթությունները[6]

Ծրագրային դասիչը[7]		Ծրագրի/ միջոցառման անվանումը		2023թ (հազ. դրամ)	2024թ (հազ. դրամ)	2025թ (հազ. դրամ)	Ծրագրի/միջոցառման գործունեության սկիզբը[8]	Ծրագրի/միջոցառման նախատեսվող ավարտը[9]
Ծրագիր	Միջոցառում							
Գոյություն ունեցող ծրագրեր/միջոցառումներ								
		ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում	*ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության և սահմանադրական արդարադատության ապահովում*	839007.8	842411.6	853218.1		
		ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում	*ՀՀ սահմանադրական դատարանի պահուստային ֆոնդ*	16780.2	16848.2	17064.4		
		ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում	*Սահմանադրական դատարանի տեխնիկական հագեցվածության ապահովում*	15814.7				

[6] *Աղյուսակում ներկայացվում են հայտում ներառված գոյություն ունեցող և նոր նախաձեռնություններ հանդիսացող բյուջետային ծրագրերը/միջոցառումներն՝ ըստ դրանց ֆինանսավորման առաջնահերթության, դեպի ներքև նվազող առանցնահերթությամբ:*

[7] *Նոր նախաձեռնությունների դեպքում ծրագրային դասիչը լրացվում է այն դեպքում, երբ նոր նախաձեռնությունները վերաբերվում են գոյություն ունեցող ծրագրերի կամ միջոցառումների ընդլայնմանը*

8 Լրացվում է ծրագրի գործունեության սկիզբը (այն տարեթիվը, երբ առաջին անգամ այդ ծրագիրը հաստատվել է որևիցե ՀՀ պետական բյուջեով): Այն դեպքում երբ ծրագիրը նոր է և դեռ չի ֆինանսավորվել պետական բյուջեով, նշվում է «նոր ծրագիր»: Այն դեպքերում, երբ ծրագիրը շարունակաբար գործում է ավելի քան 5 տարի և անհնար է վերհանել ծրագրի մեկնարկի տարեթիվը, ապա նշվում է «ավելի քան 5 տարի»:

9 Լրացվում է այն դեպքում, երբ ծրագիրը նախատեսված կամ հաստատված է կոնկրետ ժամանակահատվածի համար (օրինակ՝ ներքին կամ արտաքին աջակցությամբ կոնկրետ ծրագրեր): Անորոշ ժամկետայնության պարագայում լրացվում է «շարունակական» բառը:

Հավելված N 8. Բյուջետային ծրագրերի/միջոցառումների գծով ծախսերը՝ վարչատարածքային բաժանմամբ (ըստ մարզերի)

Ծրագրային դասիչը		Ծրագիր /Միջոցառում	2021թ փաստ. (հազ. դրամ)				2022թ սպասվող (հազ. դրամ)				2023թ բյուջե (հազ. դրամ)				2024թ բյուջե (հազ. դրամ)				2025 թ բյուջե (հազ. դրամ)			
			Ընդամենը	<Երևան>[10]	<Մարզի անվանումը>	...	Ընդամենը	<Մարզի անվանումը>	<Մարզի անվանումը>	...	Ընդամենը	<Մարզի անվանումը>	<Մարզի անվանումը>	...	Ընդամենը	<Մարզի անվանումը>	<Մարզի անվանումը>	...	Ընդամենը	<Մարզի անվանումը>	<Մարզի անվանումը>	...
1092		ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում	679010.9				704624.6				871602.7				859259.8				870282.5			
	11001	ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության և սահմանադրական արդարադատության ապահովում	665793.8				690808.4				839007.8				842411.6				853218.1			
	11002	ՀՀ սահմանադրական դատարանի պահուստային ֆոնդ	13217.1				13816.2				16780.2				16848.2				17064.4			

[10] Բացել բյուջետային ծախսերը առանձին մարզերի մակարդակով

Ծրագրային դասիչը		Ծրագիր /Միջոցառում	2021թ փաստ. (հազ. դրամ)				2022թ սպասվող (հազ. դրամ)				2023թ բյուջե (հազ. դրամ)				2024թ բյուջե (հազ. դրամ)				2025 թ բյուջե (հազ. դրամ)			
			Ընդամենը	<Երևան>[10]	<Մարզի անվանումը>	...	Ընդամենը	<Մարզի անվանումը>	<Մարզի անվանումը>	...	Ընդամենը	<Մարզի անվանումը>	<Մարզի անվանումը>	...	Ընդամենը	<Մարզի անվանումը>	<Մարզի անվանումը>	...	Ընդամենը	<Մարզի անվանումը>	<Մարզի անվանումը>	...
	31001	*Սահմանադրական դատարանի տեխնիկական հագեցվածության ապահովում*									15814.7											
	.....																					
.....																						

Հավելված N 10. Ամփոփ ֆինանսական պահանջներ ՄԺԾԾ ժամանակահատվածի համար

Աղյուսակ 1. Ծրագրերի և միջոցառումների գծով ամփոփ ֆինանսական պահանջներ 2023-2025 թթ համար

(հազ. դրամ)

Ծրագրային դասիչը	Ծրագրի/միջոցառման անվանումը	Գոյություն ունեցող պարտավորությունների գծով հաշվարկված (ճշգրտված) ծախսերը[11] (հազ. դրամ)	Ծախսային խնայողության գծով ամփոփ առաջարկը[12] (հազ. դրամ) (-)	Նոր նախաձեռնություններ (հազ. դրամ) (+)	Միջոցառման գծով ամփոփ ծախսերը[13] (հազ. դրամ)

[11] *Ներկայացվում է գոյություն ունեցող պարտավորություններն դասվող միջոցառումների գծով հաշվարկված ծախսերն (առանց ծախսային խնայողությունների վորաբերյալ առաջարկների ներառման):*

[12] *Ներկայացվում է գոյություն ունեցող պարտավորություններն դասվող միջոցառումների գծով ծախսային խնայողության վերաբերյալ ամփոփ առաջարկը:*

Ծրագիր	Միջոցառում		2023թ	2024թ	2025թ	2022թ	2023թ	2024թ	2022թ	2023թ	2024թ	2023թ	2024թ	2025թ
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ														
1092		*ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում*	871602.7	859259.8	870282.5							871602.7	859259.8	870282.5
	11001	*ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության և սահմանադրական արդարադատության ապահովում*	839007.8	842411.6	853218.1							839007.8	842411.6	853218.1
	11002	*ՀՀ սահմանադրական դատարանի պահուստային ֆոնդ*	16780.2	16848.2	17064.4							16780.2	16848.2	17064.4
	31001	*ՀՀ սահմանադրական դատարանի տեխնիկական հագեցվածության ապահովում*	15814.7									15814.7		
Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ (շարունակական բնույթի)														
		<Ծրագրի անվանումը>												
		<Միջոցառման անվանումը>												
		<Միջոցառման անվանումը>												
Հայեցողական ծախսերին դասվող այլ միջոցառումներ														
		<Ծրագրի անվանումը>												
		<Միջոցառման անվանումը>												
		<Միջոցառման անվանումը>												

Աղյուսակ 2. Հայտով ներկայացված՝ 2023-2025թթ ընդհանուր ծախսերի համեմատությունը ՀՀ 2022թ. պետական բյուջեի և 2023-2025թթ. համար սահմանված նախնական կողմնորոշիչ չափաքակաների հետ

(հազարդրամներով)

	2022թ.	2023թ.	2024թ.	2025թ.

[13] *Ներկայացվում է միջոցառման գծով առաջարկվող ծախսերը՝ ծախսային խնայողությունների և նոր նախաձեռնությունների վերաբերյալ առաջարկները ներառած: Այն հավասար է փվյալ միջոցառման գծով նախորդ սյունակներում համապատասխան տարվա համար ներառված ցուցանիշների հանրագումարին:*

1. Պետական մարմնի գծով2023-2025 թվականների համար սահմանված ֆինանսավորման նախնական ընդհանուր կողմնորոշիչ չափաքանակները	X	871602.7	859259.8	870282.5
2. <<ՀՀ 2022թ. պետականբյուջեիմասին>>ՀՀօրենքով պետական մարմնի գծով սահմանվածընդհանուրհատկացումները	704624.6	X	X	X
3. Ընդամենը հայտով ներկայացված ընդհանուր ծախսերը՝ 2023-2025 թթ. ՄԺԾԾ համար (տող 3.1 + տող 3.2 + տող 3.3.)	X	871602.7	859259.8	870282.5
3.1 Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների գնահատում 2023-2025 թթ. ՄԺԾԾ համար (առանց ծախսային խնայողությունների վերաբերյալ առաջարկների ներառման)	X	871602.7	859259.8	870282.5
3.2 Ծախսային խնայողությունների գծով առաջարկները (-) նշանով	X			
3.3 Նոր նախաձեռնությունների գծով ընդհանուր ծախսերը	X			
4.Տարբերությունը՝ՀՀ2022թ.պետականբյուջեիհամապատասխանցուցանիշից (տող 3 -տող 2)	X	871602.7	859259.8	870282.5
5. Տարբերությունը2023-2025թվականների համար սահմանված ֆինանսավորման նախնական ընդհանուր կողմնորոշիչ չափաքանակներից (տող 3-տող 1)	X			

Հավելված N 12

ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ՈԼՈՐՏԸ

ՀՀ սահմանադրական դատարանը Հայաստանի Հանրապետության իրավակարգում ապահովելով Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը, որպես ռազմավարական առաջնահերթ խնդիր Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է սահմանադրական արդարադատություն:

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

ՀՀ սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով շարունակելու է որոշել օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, ՏԻՄ որոշումների, մինչև միջազգային պայմանագրերի վավերացումը նրանցում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը ՀՀ սահմանադրությանը, ինչպես նաև լուծելու է հանրահավաքների արդյունքների ու պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը:

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում ծրագրով նախատեսված ՀՀ սահմանադրական դատարանի առաջնահերթ ռազմավարական նպատակներն են.

- *Բարձրացնել սահմանադրական արդարադատության արդյունավետությունը, ապահովել Հայաստանի Հանրապետությունում սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը,*
- *իր գործունեությամբ նպաստել սահմանադրության և նրանում ամրագրված իրավունքների ու պարտավորությունների նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը,*
- *սահմանված կարգով որոշում կայացնել օրենքների, Ազգային ժողովի որոշումների և այլ նորմատիվ ակտերի սահմանադրությանը համապատասխանության մասին,*
- *շարունակել Հանրապետությունում իրավունքի գերակայության ապահովման ուղղությամբ գործունեությունը:*

Հիմնական գերակա վերջնական արդյունքները, որոնց վրա գերատեսչությունը ձգտում է ներազդել, նրանց իրագործման ռազմավարությունով ՀՀ սահմանադրական դատարանը հետամուտ կլինի հետևյալ արդյունքներին, մասնավորապես՝

Օրենքով սահմանված կարգով որոշել օրենքների, Ազգային ժողովի որոշումների, այլ նորմատիվ ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը, մինչև վավերացումը որոշել միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը ՀՀ սահմանադրությանը, լուծել հանրաքվեների հետ կապված վեճերը:

Սահմանադրական դատարանի այս լիազորությունը սահմանված է Սահմանադրությամբ և առաջնահերթ է հանդիսանում առաջիկա տարիների համար:

4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում ծրագրի իրականացման արդյունքնում ակնկալվում է Օրենքով սահմանված կարգով լուծելով ընդունված որոշումների, օրենքների, իրավական այլ ակտերի սահմանադրությանը համապատասխանությունը՝ ապահովելով նրանց արդյունավետ գործողությունը: Սահմանադրական արդարադատություն իրականացնելիս սահմանադրական դատարանն անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը: Սահմանադրական դատարանի որոշումներին բնորոշ են պարտադիրությունը, վերջնական լինելը, անմիջական գործողությունը:

ՍԴ-ի՝ գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձնաց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար ՀՀ-ի ամբողջ տարածքում:ՍԴ-ի խնդիրը վիճարկվող իրավական նորմի հետագա իրավաբանական ճակատագրի որոշումն է: Կախված ՍԴ-ի որոշումից ՝ վիճարկվող իրավական ակտը կամ կորցնում է իր իրավաբանակն ուժը, կամ շարունակում է պահպանել իր գործողությունը: Այդ իսկ պատճառով ՍԴ-ի որոշումները տարածվում են ոչ միայն վիճարկվող նորմի կիրառման հետ կապված կոնկրետ գործի վրա.Վիճարկվող նորմատիվ ակտի հակասահմանադրականության վերաբերյալ ՍԴ-ի որոշումն ունի գործողության այնպիսի ոլորտ, ինչպիսին որ ունի նորաստեղծ մարմնի նորմատիվ ակտը:

Հավելված N 13

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ
/ԱՆՁՆԱԳԻՐ/

ՀՀսահմանադրական դատարանի գործունեության ապահովում

(Բյուջետային ծրագրի անվանումը)

1. ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

1.1 ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝
ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում
1.2 ԾՐԱԳՐԻ ԴԱՍԻՉԸ՝
1092
1.3 ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆԸ (ԲԳԿ)՝
ՀՀ սահմանադրական դատարան
1.4 ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ՝
ավելի քան 5 տարի
1.5 ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՎԱՐՏԸ՝
շարունակական
1.6 ԾՐԱԳՐԻ ՆԱԽՈՐԴ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ՝
ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում

1. ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

4. ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Աղյուսակ #.... (Յուրաքանչյուր ինքնուրույն չափորոշիչի համար լրացվում է առանձին աղյուսակ)

2. ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1 ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ՝	
ՀՀ-ում ապահովել սահմանադրական գերակայությունը	
2.2 ԾՐԱԳՐԻ ՀԻՄՔԵՐԸ՝	
Ծրագրի իրավական հիմքերը	Նկարագրությունը
ՀՀ սահմանադրություն	ՀՀ սահմանադրական դատարանի մասին օրենք
....	
2.3 ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ (ԲԳԿ) ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ՝	
ՀՀ սահմանադրական դատարանի մասին օրենք	
2.4 ԾՐԱԳՐԻ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ ԵՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝	

ՀՀ քաղաքացիները, կազմակերպությունները			
2.5 ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ՝			
Ծրագրի միջոցառման դասիչը	Ծրագրի միջոցառման անվանումը	Ծրագրի միջոցառման նկարագրությունը	Ծրագրի միջոցառման հիմնական շահառուները և փոխհատուցման շրջանակը
1092	*ՀՀ սահմանադրական դատարանի*	*Ապարատի պահպանման ծախսեր*	*ՀՀ քաղաքացիները, կազմակերպությունները*

	գործունեության և սահմանադրական արդարադատության ապահովում		
	ՀՀ սահմանադրական դատարանի պահուստային ֆոնդ	*Չկանխատեսված ծախսեր*	
	Սահմանադրական դատարանի տեխնիկական հագեցվածության ապահովում		
....			
2.6 ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ ԴՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ			
Միջոցառման անվանումը	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝			
11001	*պարտադիր*	*Ներկայացուցչական ծախս, գործուղումների ծախս*	*ՀՀ սահմանադրության 167 հոդված*
11002	*պարտադիր*	*Որոշվող ծախսային ուղղություններ*	*ՀՀ սահմանադրական դատարանի մասին օրենքի 3-րդ հոդված, 5-րդ կետ*
31001	*պարտադիր*		*Սահմանադրական դատարանի մասին օրենք*